ինոր մարդութենի[1] էրակ քաշեց խանեց քեամվից։

130. Տաւիթ Խանդութ խանըմին ասաց. «Ալի էրթանք մեր երկիր, էլ ես Մհէրի երես պիտի չտեսնամ. թէ չես իգեայ, ես կէս կէրթամ»։ Խեճան գնացին, Մհէր մնաց մոտ քեռին։

131. Տաւիթ տել չէր խասե ուր երկիր, Խալաթ քեաղաք խասան։ Էն տեղաց սըլթան Զըմուս անուր աղջիկ մը էլաւ Տաւիթի դէմ, ասաց. «Ես ալիւ էս տեղ կռիւ մը պիտի անենք, իրարու ճըռպենք. ապա թող կուտամ էրթաս»։ Տաւիթն ասաց.—Կաց հալայ կնիկս տանեմ քաղաք, տառնամ գեամ կռվենք։—Աղջիկըն ասաց. «Ես խաւատարմութենն չեմ անի. թէ կգառնաս, թէ զորդ կասես, ձեռ զարկ վեր քըոյ ծոյի խաչին, էրգիւմ արա, որ հաւատամ»։ Տաւիթ կագղնայ[2] ձեռք զարկեց վեր ձախ ծոցին, էրտվաւ—էն գիտէր թէ խաչը աջ ծոցն ի, մուրուսի սանդրը՝ ձախ ծոցն ի։—

132. Երբ գնաց տուն, ուզեց սանդր խանել մուրուս սանդրեր, տեսաւ որ խաչ ձախ ծոցին մէջն ի սիւցեր էր, խաչն էլ էրէր սև կուտ[3]. տառձաւ կնկեան ասաց. «Իմ խաչ սիւցե. ես ալ էրթամ էն օռօսպու[4] վէրէն կռիւ, ամայ ձի, ճակ[5] չեմ տանի խետս. կերթամ, համայ ոտ պիտի գնեմ վեր ինոր ոտաց ճղեմ, թալեմ, գամ»։

133. Տաւիթ ճամբան ինկեաւ։ Խլաթայ սուլթան Զըմուս աղջիկ ուր մզրախ աղույատեց, մտաւ կարմնճի տակ. էն տեղէն, որ Տաւիթի պիտի ընցներ։ Տաւիթն ընցնելու ժամանակ կարմընճի տակէն մզրախ մլեց Տաւիթի կռնէն[6]. ծակեց իինամէջկից ալուրս էլաւ։ Տաւիթն ինկաւ մեռաւ։

134. Զէնով Յովան տեսաւ, որ Տաւիթն անգընցաւ[7], էլաւ գնաց վինտռելու։ Էկաւ Ախլաթու երկիր, տեսաւ որ Տաւիթ մեռեր ի, Տաւիթի լէշ վերցուց տարաւ ուր երկիր քեօշկի առջև, որ պիտի լվանալ տար։ Խանդիւթ խանըմ որ տեսաւ, ասաց. «Ըսատուց որայ արև լրոս ձիկ խարամ էլնի»։ Զինք քեօշկից թալեց վեր Տաւիթի լէշին, էն էլ ինոր խետ մեռաւ։ Երկուս մէյտեղ տարան Ծովասարու Մարաւթի վանք թաղեցին։

135. Որ գառձան տուն՝ ճուլյապ օրօխկեցին Մհէրին, թէ քըոյ խէրն էլ մէրն էլ շատ խիւանատեն, շուտով էլնես գեաս։ Մհէր որ էկաւ, ուր խէրն մէրն խարցուց, ժոյմը[8] խաբեցին, վերջն ասին, որ Ախլաթու սուլթանը քոյ խէրն սպանեց, քըոյ մէրն էլ

---

1 Այրութեան. 2 Գիտմամբ. 3 Թանիրի կողէն կրակի վրայ ընկած էրած հաց. 4 Անառակ։ 5 Զէնք։ 6 Գալչայ ազգրի վերի մասն։ 7 Անազանեցաւ, ուշացաւ։ 8 Մի ժամանակ՝ առ ժամանակ։